

ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության հնարավոր բաշխման եղանակները

Քոչարյան Լ. Ա.

ՀՊՏՀ Բանկային գործ և ապահովագրության ամբիոն. (Հայաստան, Երևան)
levonkocharyan@outlook.com

Վճռորոշ բաներ՝ ապահովագրություն, գյուղատնտեսություն, բաշխում, գործակալ, բանկ, միջնորդավճար

Возможные распределительные механизмы сельскохозяйственного страхования в Армении

Кочарян Л.А.

Кафедра банковского дела и страхования АГЭУ (Армения, Ереван)
levonkocharyan@outlook.com

Резюме: Несмотря на то, что плотность сельского хозяйства в ВВП Армении уменьшается из года в год (в 2012 году он составлял 17,9%, а в 2017 году - 14,9), экономика сельского хозяйства является самой большой сферой экономики в Армении, с точки зрения количество рабочей силы и плотность ВВП, продовольственная безопасность и т. Д. Плотность сельскохозяйственного труда в общем количестве рабочей силы в Армении составляет 31,3%, что очень велико по сравнению с другими сферами. Отсюда можно сделать вывод, что сельскохозяйственное страхование может стать вторым по величине видом страхования после ОСАГО. В этой статье будут обсуждаться механизмы распределения страховых продуктов в Армении и их полезность в сельскохозяйственном страховании.

Ключевые слова: страхование, сельское хозяйство, распределение, агент, банк, комиссия

The Possible Distribution Mechanisms of Agricultural Insurance in Armenia

Kocharyan L.A.

The Chair of Banking and Insurance of ASUE (Armenia, Yerevan)
levonkocharyan@outlook.com

Abstract: Notwithstanding the fact, that the density of agriculture in GDP of Armenia is decreasing year by year (it was 17.9% in 2012 and 14.9 in 2017), the agricultural economy is the largest sphere of economy on Armenia with the number of labor, density in GDP, food security point of view, etc. The density of agricultural labor in total number of labor in Armenia is 31.3%, which is very huge in comparison with other spheres. Hence, we can conclude, that agricultural insurance can become the 2nd largest line of business in insurance after CMTPL. This article will discuss the distribution mechanisms of insurance products in Armenia and its usefulness in agricultural insurance.

Keywords: Insurance, Agriculture, distribution, agent, bank, commission

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում գյուղացիական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տարեցտարի նվազում է (2012թ.-ն՝ 17.9%, իսկ 2017-ին՝ 14.9¹), այնուամենայնիվ գյուղատնտեսությունը ՀՀ ամենաընդգրկուն ոլորտն է՝ և՛ զբաղվածների տեսակարար կշռով, և՛ ՀՆԱ մեջ տեսակարար կրճռով, և՛ պարենային անվտանգության տեսանկյունից: Գյուղատնտեսական ոլորտի զբաղվածների տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր զբաղվածության մեջ կազմում է 31,3%, ինչը

առեղի թիվ է մյուս ոլորտների համեմատությամբ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ապահովագրությունը միտում ունի դառնալ ՀՀ-ում ապահովագրության ամենաընդգրկուն և սփռված ճյուղը՝ ԱՊՊԱ-ից հետո:

Սույն հոդվածում կներկայացնենք ՀՀ-ում ապահովագրության պրոդուկտների բաշխման ձևերը, խնդիրները, ինչպես նաև կառաջարկենք մեխանիզմներ գյուղատնտեսական ապահովագրության արդյունավետ բաշխման համար:


ՀՀ ընդհանուր հողային մակերեսը կազմում է 2,974,300 հա, որից գյուղատնտեսական

¹
<https://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS?locations=AM>

նշանակության են 2,043,000 Հա-ն կամ ընդհանուր հողային մակերեսի 68.8%-ը [6]:

Ստորև գծապատկերով ցույց տանք գյուղատնտեսական նշանակության հողերի բացվածքը ըստ տեսակների.

Գծապատկեր 1



Գծապատկերից երևում է, որ բազմամյա տնկարկները կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 2%-ը, իսկ վարելահողերը՝ 22%-ը, միասին՝ 24% կամ 480,800 Հա: Սա գյուղատնտեսական ապահովագրության թիրախն է, քանի որ հենց բազմամյա տնկարկի և վարելահողերի մշակաբույսերն էլ ենթակա են ապահովագրության:

Մեկայլ վիճակագրության համաձայն՝ ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի 96.5%-ը գոյանում է բնակչության տնտեսություններից, իսկ ընդամենը 3.5%-ը՝ առևտրային կազմակերպություններից:

Գյուղատնտեսության 908 մլրդ ՀՀ դրամ համախառն արտադրանքի 876 մլրդ դրամը գոյանում է բնակչության տնտեսություններից, որոնց քանակը մոտ 340,000 է:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ բաշխման տեսանկյունից գյուղատնտեսական ապահովագրությունը բարդ է հետևյալ պատճառներով.

1. Գյուղատնտեսական տնտեսությունների քանակը շատ են,
2. Գյուղատնտեսական տնտեսությունների 96.5%-ը փոքր են կամ միջին,
3. Կոոպերատիվային մշակույթը թեր-զարգացած է,

4. ՀՀ-ում հողային սեփականության տարանջատումը հստակ չէ, և սովետական տարիներից մինչև այսօր փաստաթղթավորված սեփականությունները անհամեմատ քիչ են օրինական սեփականությամբ տիրապետվող հողամասերի համեմատությամբ:

Այժմ ներկայացնենք ՀՀ-ում ապահովագրական պրոդուկտների բաշխման առավել տարածված ձևերը, և համադրենք գյուղատնտեսական ապահովագրության հետ:

Այսպես, ՀՀ-ում ամենամասշտաբային ապահովագրությունը Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությունն է, կա ԱՊՊԱ-ն: Այն ներդրվել է 2011թ-ից, համարվում է ապահովագրության ամենակայացած և կարգավորված տեսակը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 508,297 հատ տրանսպորտային միջոց ունեցել են ԱՊՊԱ պայմանագիր¹: Այսպիսի քանակի ապահովագրության պայմանագրերը բաշխվում են հետևյալ կերպ.

¹ <http://appa.am/datas/zlawdocs/399975325dce88c561a3cd709683afb3.pdf>

1. Գործող 6 ապահովագրական ընկերությունների հաստիքային աշխատակիցների կողմից՝ ուղիղ վաճառքների միջոցով,

2. Ֆիզիկական և իրավաբանական անձ ապահովագրական գործակալների կողմից, որոնց քանակը մոտ 5,000 է,

3. Բանկերի և վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի կողմից, որոնք հանդիսանում են նաև ապահովագրական գործակալ,

4. Online վաճառքների և բջջային հավելվածների միջոցով:

Վերոնշյալ բաշխման եղանակներից ամենաընդգրկունը գործակալական վաճառքներն են: Մինչև 2017թ.-ը ԱՊՊԱ վաճառքների գրեթե 90%-ը իրականացվում էր գործակալական ցանցի միջոցով: 2017-ի վերջից ՀՀ ԿԲ և Ավտոապահովագրողների Բյուրոյի որոշմամբ գործակալական միջնորդավճարները 15%-ից նվազեցին մինչև 5%, որի արդյունքում շատ գործակալներ դադարեցրեցին իրենց գործունեությունը: Արդյունքում մոտ 20-30%-ով պակասեց գործակալական վաճառքները, սակայն միննույն է, այն մնում է ամենամեծը և արդյունավետը:

Online վաճառքները կազմում են ընդհանուր վաճառքների ընդամենը 1.9%-ը:

Բանկային վաճառքների տեսակարար կշռի վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն, սակայն կարելի է եզրակացնել, որ բանկային վաճառքները նույնպես առանցքային դեր ունեն ԱՊՊԱ վաճառքների մեջ՝ ի շնորհիվ նրանց ներկայացվածության ՀՀ ամբողջ տարածքում: Այսպես, Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտն է: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում կար 17 գործող առևտրային բանկ: Դրանք ունեն 528 մասնաճյուղ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, որից 237 գտնվում են Երևանում: Հայաստանյան առևտրային բանկերի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել է 11,175 մարդ²: 2019թ. ապրիլի 13-ի դրությամբ այս թվերը գրեթե չեն շեղվել, իսկ բանկերի քանակը մնացել է նույնը:

Ապահովագրական ընկերությունները նույնպես ունեն բավականին լայն ընդգրկ-

վածությունը ՀՀ ամբողջ տարածքով: Օրինակ, ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ Ապահովագրական ընկերությունը ունի 47 ներկայացուցչություն Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ռոսգոստրախ Արմենիա ԱՓԲԸ-ն նույնպես ներկայացված է ՀՀ ամբողջ տարածքում՝ 46 գրասենյակների շնորհիվ³: Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ-ն մարզերում ունի 3 մասնաճյուղ⁴: Մյուս 3-ի ընդգրկվածությունը նույնպես լայն է:

Հիմք ընդունելով ՀՀ ապահովագրական շուկայի ընդգրկվածությունը, բաշխման առավել լայն մեխանիզմները, փորձը և արդյունավետությունը, ստորև ներկայացվում են գյուղատնտեսական ապահովագրության բաշխման հետևյալ ցանցերը կամ եղանակները.

1. **Ապահովագրական ընկերությունների** կողմից ուղիղ վաճառքներ՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով:

2. **Ապահովագրական գործակալների** ցանցի միջոցով: Այստեղ հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ գործակալները չեն տիրապետում գյուղատնտեսական ապահովագրության, և առհասարակ ապահովագրական պրոդուկտների նրբություններին, և վերապատրաստման ընդգրկուն և լայնածավալ միջոցառումների կարիք է առաջանում: Այնուամենայնիվ, գործակալական վաճառքները մնում են աշխարհում ապահովագրական պրոդուկտների բաշխման ամենահայտնի եղանակը:

3. **Բանկերի մասնաճյուղերի** միջոցով: Բանկերը և վարկային կազմակերպությունները, որոնք արդեն իսկ հանդիսանում են ապահովագրական ընկերությունների գործակալներ, կարող են ապահովագրության այլ պրոդուկտների հետ միասին վաճառել նաև գյուղատնտեսական ապահովագրության պոլիսներ: Ավելին, գյուղատնտեսական ապահովագրությունը կարելի է համադրել գյուղատնտեսական վարկավորման հետ, մշակել վարկային պայմանների ավելի գրավիչ պայմաններ՝ ապահովագրության առկայության դեպքում, կամ, եթե ավելի խստապահանջ

² Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, KPMG Հայաստան Փետրվարի 28, 2018թ.

³ <http://www.rgs.am/arm/4/page.html>

⁴ <http://www.silinsurance.am/branches.html>

գտնվեն, գյուղատնտեսական վարկերի տրամադրման համար ապահովագրությունը դարձնեն պարտադիր պահանջ:

4. Համայնքապետարանների միջոցով: ՀՀ-ում կա 10 մարզ (Երևանից բացի), որոնցում գործում են 866 գյուղական համայնքներ⁵: Այսինքն, 866 համայնք կարող է գործակալական պայմանագրեր կնքել ապահովագրական ընկերությունների հետ, և միջնորդ հանդիսանա ֆերմերի և ապահովագրական ընկերության միջև: Արդյունքում, եթե օրենքը թույլ է տալիս, համայնքապետարանների բյուջեն կհամարվի լրացուցիչ միջոցներ՝ միջնորդավճարների հաշվին: Համայնքապետարանները կարող են գյուղատնտեսական ապահովագրության պայմանագրեր վաճառել առանց միջնորդավճարների և գործակալական պայմանագրերի:

5. Հայփոստ ՓԲԸ միջոցով: Ներկայումս «Հայփոստ» ՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է 900 փոստային բաժանմունքներում, որոնք գործում են ՀՀ բոլոր քաղաքներում և գյուղերում⁶: Սա ահռելի ռեսուրս է ապահովագրական ընկերությունների համար՝ պոլիսների բաշխման տեսանկյունից: Հայփոստ ՓԲԸ-ին տրամադրում է ինչպես բանկային, այնպես էլ ապահովագրական ծառայություններ՝ ի դեմս ԱՊՊԱ-ի: Հետևաբար, մնում է միայն վերապատրաստել գրասենյակների աշխատակիցներին և մեկնարկել գյուղատնտեսական ապահովագրության պայմանագրերի վաճառքը:

6. Կոոպերատիվների միջոցով: Համաձայն ԱՎԾ կողմից 2014թ. անցկացված համատարած գյուղատնտեսական հաշվառման՝ ՀՀ-ում առկա 340,000 գյուղական տնտեսություններից միայն 6,875-ը կամ 2%-ն են գյուղացիական կոոպերատիվների անդամ⁷: Աշխարհում զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրներում այս ցուցանիշը տասնյակ անգամներ ավելի բարձր է: Հետևաբար, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ՀՀ-ում գյուղացիական կոոպերատիվների ստեղծման, զարգաց-

ման համար, ինչը միանշանակ մեծ դրական ազդեցություն կունենա ապահովագրության բաշխման, ինչպես նաև ապահովագրական հայտերի կարգավորման, վնասների գնահատման, սպառողների պաշտպանության և վեճերի լուծման համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում արդեն իսկ գոյություն ունի ապահովագրության բաշխման կայացած ցանց, որը ամուր հիմք կարող է դառնալ գյուղատնտեսական ապահովագրության ներդրման, տարածման և զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018 - Գյուղատնտեսություն
2. World bank report - Agriculture, forestry, and fishing, value added (% of GDP), 2017
3. ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրո, Վիճակագրություն ԱՊՊԱ ոլորտի մի շարք ցուցանիշների վերաբերյալ, 31.12.2018թ.
4. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, KPMG Հայաստան Փետրվարի 28, 2018թ.
5. Հայաստանի Համայնքների Միություն, Համայնքների Քարտեզ:
6. <https://www.armstat.am/file/doc/99510798.pdf>

⁵ <https://www.caa.am/map.html>

⁶ <https://www.haypost.am/hy/about-haypost>

⁷ <https://shabat.am/am/article/107274/Hayastanum-gyughatntesakan-kooperativi-andam-e>